ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2022 թվականի N 1428 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 48-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի ՀՕ-180-Ն օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 48-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N 1 հավելվածի՝

ա. III բաժնի 3-րդ պարբերությունում «55 ՄՎտ, թողարկումը մինչև 2022 թ. հուլիս» բառերը փոխարինել «55 ՄՎտ, թողարկումը մինչև 2023 թ. սեպտեմբերի 1-ը» բառերով.

2) N 2 հավելվածի՝

ա. 1.6-րդ ենթակետի «Վերջնաժամկետ» սյունակում «2022 թ. հուլիս» բառերը փոխարինել «2023 թ. սեպտեմբերի 1-ը» բառերով,

բ. 1.10-րդ ենթակետի «Գործողություն» սյունակում «համայնքային արևային կայանների կառուցման նպատակով» բառերը փոխարինել «համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից արևային կայանների կառուցման նպատակով» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.09.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ